



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1874 ՍԻՆ

Բ. ՏԱՐԻ

6 ԳԻՆԻՍԵՆ 1874



ՄԻՇՈՒՆԻՆՍԻՍԻ

ՆԱԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ

1874

Table of contents with multiple columns of text, including page numbers and titles of various sections and articles.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՍԱԿԱՆՔ	
4. Թաղէս	Եղիսիակոս
5. Գրեգոր	Ա
6. Խորեն	Ա
7. Գարեգին	Վարդապետ
8. Մատթէոս	Ա
9. Խորեն	Ա
10. Կարապետ	Ա
11. Ներսէս	Ա
12. Ամբրոսիոս	Ա
13. Հմայրակ	Ա
14. Յովհաննէս	Ա
15. Յովհաննէս	Ա
16. Գրեգոր	Ա
17. Խորեն	Ա
18. Յարութիւն	Ա
19. Սիւքիան	Ա
20. Արիստակէս	Ա

ԱՇԽԱՏԱԿԱՆ Ք

ԱՇԽԱՏԱԿԱՆ Ք	
21. Սենեքերիմ	Մ. Մանուկեան
22. Պողոս	Ճամակունեան
23. Յակոբ	Յրէնկեան
24. Բարսեղ	Քիւրքիւնի
25. Թաղէս	Պէկեան
26. Գեորգ	Սարմարանեան
27. Ն.	Իսահակեան
28. Պողոս	Պատմասեան
29. Եսայի	Անուխեան
30. Մանուկ	Արապեան
31. Պողոս	Ճեղանեան
32. Բարսեղ	Հայրանեան
33. Գրեգոր	Պէրպէրեան
34. Պետրոս	Քերէստեան

(Բ. Վիճակ)

Պէշիթիւն	
35. Կարապետ	Ս. Իսահակեան
36. Յարութիւն	Մարգարեան
37.	
38. Կարապետ	Ս. Իսահակեան
39. Յարութիւն	Մարգարեան
40.	
Երկրագիտութիւն	
41. Համբարձում	Իսահակեան
42. Խաչատուր	Ղազարեան
43. Կարապետ	Գ. Փափազեան
44.	

ԻՍԿՐԻՒՄԱՐ Մ. ԽՈՒՆ

45. Յովակիմ	Ս. Մարգարեան
46. Յարութիւն	Պատմասեան
47.	
48.	

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
- Բ. 9 Բացակայութիւն բանաւոր պատճառաւ :
- Հ. Զրամարեալ :

ԻՍԿՐԻՒՄԱՐ Մ. ԿԱՐԱՊԵՏ

49. Ալեքսան	Սարգսեան
50. Միհրան	Պահլաւապետեան
51. Յովհաննէս	Ճեղանեան
52.	

(Գ. Վիճակ)

Բերն	
53. Գրեգոր	Սելիմեան
54. Տէրմազ	Մ. Էջմէշեան
55. Միհրան	Մամիկոնեան
56. Արիկ	Ունեան
57. Ստեփան	Խնդիրեան
58. Նշան	Բաղապետեան
59. Մարտիրոս	Յ. Տիգրեան
60.	
61.	

ԳԱՐՄՔ ԳՈՐԾ

62.	
Միջնակի	
63. Յակոբ	Պ. Նորատուկեան
64. Յակոբ	Կոստանդեան
65. Տէրմազ	Եսայի
66. Կարապետ	Պ. Պէրեանց
67.	

Պէշիթիւն

68. Յարութիւն	Մէրեմ-Գուլ
69.	
70.	

ԳԱՐՄՔ ԳՈՐԾ

71. Միհրան	Մուրատեան
72. Կարապետ	Շահապետեան
73. Յակոբ	Եւսէպիանեան

Երկրագիտութիւն

74.	
75.	
76.	

ԳՈՐԾ ԳՈՐԾ

77.	
78.	
79. Ղազար	Հովնեան
80. Միհրան	Գ. Իսահակեան
81. Յովհաննէս	Կրճիքեան
82.	

ՊԱՐՄԱՆ

83. Յարութիւն	Գ. Տատեան
84. Յարութիւն	Չէնճիրեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲՍՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ժ

6 ԴԵՑՏԵՄԲԵՐ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆՍՊԵՏ. — ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՅ Գ. ՏԱՏԵՍԵ

ՕՐԵԿՄԵՐ

1. Ամբողջացում Նախարանի Դիւանաց .
2. Աղթամարայ կամ ռազմական խնդիր .
3. Վեհափառ Հայրապետի կոնգրակիմ խնդիրը .
4. Փոփոխեալ տրամադրութիւնը Ազգ. Մանկավարչութեան .

Ատենը բացուեցաւ ժամը 7 ին 'ի ներկայութեան ՅՅ երեսփոխանաց , որոց վերջին թիւը 51 ի հասաւ :

Նախընթաց նիստին առնադրութիւնն առանց ղիտողութեան ընդունուեցաւ :

Ատենապետ Պէյը Ժողովոյն ներկայեց նախ 2 հրատարակելու , Տատեան Առաքել Սիսակ Պէյին եւ Պէկեան Թաղէոս Էփէնտիին կողմանէ եկած , որոնք կարգացուեցան , եւ ուրոյն ուրոյն քուէի գրուելով առաջինը 4 քուէի եւ երկրորդը 5 ի գէտ մեծամասնութեամբ ընդունուեցան :

Երկրորդ Ժողովոյն ծանոցը Մամբրէեան Տէր Արիստակէս քահանային եւ Մուրատեան Միհրան Էփէնտիին անձնական տկարութեան պատճառաւ եւ Արիստակէս Արքայի Էփէնտիին ճամբորդութեան պատճառաւ բացակայութիւնը :

Երրորդ Ժողովոյն ներկայեց երեսփոխանաց ոմանց կողմէ մատուցուած գրաւոր առաջարկութիւնները յետագայ կարգաւ :

Տուրքի խնդիրը՝ երթալով ծանր կերպարանք մը կ'առնու , մանաւանդ գաւառացոց մէջ եւ ամենուրեք արտունջներ կը լսուին :

Գաւառացին իրաւամբ կը տրտնջայ այս մասին , քանզի ըստ Սահմանադրութեան Պօլսոյ մէջ ամեն իրաւունքէ զուրկ լինելով , Պօլսոյ ազգայնոց համար սահմանուած տուրքը կը պահանջուի իրմէն :

Երբեւ գաւառական երեսփոխան , սոյն տուրքի մասին տիրած արտունջը ի նկատի առնելով , կ'առաջարկեմ Երեսփոխանական պատկառելի ժողովոյդ , որ սոյն տուրքի անկանոն բաշխման եղանակը սրբազրուելով , կամ Գաւառացին ալ իրաւունք տրուի Պօլսոյ մէջ որ եւ է քուէարկութեանց մասնակցելու , եւ կամ այս տուրքը՝ իր վրայէն իսպառ վերցուի , ինչպէս որ Սահմանադրութիւնը կը արամադրէ :

Եւ արդէն Սահմանադրութեան 92 եւ 95-րդ յօդուածոց տրամադրութեան համեմատ, դաւառացիին իւր տուրքը՝ իր գաւառին մէջ տալու պարտաւորեալ է, եւ իւրաքանչիւր գաւառի կողմէն կեդրոնական մտուակին տուրք մ'ալ կը տրուի, այն է Մուգաթայ ըսուածը:

Մուգաթայի տուրքն ալ օրինաւոր բաշխումն եղած չ'ըլլալով, բաւական եւ յուսացուած գումար մը չ'արտադրեր. եթէ ժողովը կ'ընդունի եւ իրեն հաճելի կը թուի լսել, կը խոստանամ այս մասին եւս տեղեկագիր մը մատուցանել:

6 Դեկտ. 1874 Մարտի 1 Ալեքսանդր

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Այս առաջարկութիւնը թէ որ ժողովն ուզէ նախաքննութեան յղել, Համարակալութեան ղիւանին յանձնել պէտք է:

ՄԱՄԻԿՈՆՆԱՆ Մ. ԷՅ.— Յանուն Քաղ. ժողովոյ կը յայտնեմ թէ կեդրոնական տրոց բաշխման եւ հաւաքման եղանակին վրայօք Վարչութեան կողմէ ծրագիր մը պատրաստուելու վրայ է յանձնաժողովոյ մը ձեռք եւ քիչ օրէն Ազգ. ժողովոյ պիտի ներկայացուի. ուստի կ'առաջարկեմ որ Մատթէոս էֆէնտի առաջարկութիւնը մնայ մինչեւ այն ատեն:

Մէկ քանի երեսփոխանք ալ ձայնակցեցան Մամիկոնեան էֆ. ին:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ.— Կ'ուզեմ հասկնալ թէ կեդր. տրոց վրայօք Քաղ. ժողովոյ բերելիք ծրագիրն արդեօք գաւառացւոց համար ալ է:

ՄԱՄԻԿՈՆՆԱՆ Մ. ԷՅ.— Այո՛, ընդհանուր կերպով է գալիք ծրագիրը:

ԻՓԼԿՃԵԱՆ Զ. ԷՅ.— Կարծեմ Մատթէոս էֆ. ի առաջարկութիւնը նախաքննութեան յղելը Վարչութեան բերելիք ծրագրին վնաս մը չտար. նախաքննիչ ղիւանը՝ որուն որ այս առաջարկութիւնը յղել պէտք է, կրնայ բանակցիլ նաեւ Վարչութեան հետ. ուստի ըստ իս արդեւք մը չեմ տեսներ, մանաւանդ օրինաւոր կը գտնեմ նոյն առաջարկութիւնը յղել Համարակալութեան ղիւանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Ըսել է թէ երկու առաջարկութիւն կայ այս մասին երեսփոխանաց կողմանէ. մէկն է սպասել Վարչութեանէն գալիք ծրագրին եւ միւսն է այժմէն յղել Համար-

ակալութեան ղիւանին: Ուստի այս երկու առաջարկութիւնը քուէի կը դնեմ.

Ժողովը 6 ձայնի դէմ 20 ձայնով որոշեց սպասել Վարչութեան ծրագրին.

2.

Նախընթաց նիստին Քաղաքական ժողովոյ պակասած անդամոց ընտրութիւնը կատարուեցաւ այն երկպառակ ցանկին վրայ, զոր Քաղաքական ժողովն բերած էր, եւ ոչ Համագումար Դիւանը, ինչպէս կը տրամադրէր ներքին Կանոնադրութիւնը:

Ժողովը գործնականապէս ընդունած եղաւ թէ՛ երբ Քաղ. ժողովէն փոքրագոյն մասը հրաժարի, անոնց տեղ նոր ընտրելեաց ցանկը մնացեալ մեծամասնութենէն պիտի ստացուի, մինչդեռ մեծամասնութիւնն ըլլար հրաժարեալ, փոքրամասնութիւնն այս իրաւունքը չպիտի ունենար, այլ այն ատեն Համագումար Դիւանը ըստ Կանոնադրութեան պիտի պատրաստէր ընտրելեաց ցանկը: Ուստի կ'առաջարկեմ Կանոնադրութեան Ե. գլուխ 17 յօդուածին Զ. հատուածին վրայ յաւելուլ այսպէս.

« Իսկ երբ Վարչութեան անդամոց փոքրագոյն մասը հրաժարած ըլլայ, մնացեալ մեծամասնութիւնը Պատրիարքին հետ խորհրդադակցութեամբ կը պատրաստէ այդ ցանկը:

6 Դեկտ. 1874 Քրիստոսոս Գաղաթեան

Ատենապետ Պէյր սոյն առաջարկութեան՝ Նախաձեռնութեան ղիւանին յղելի խնդիր մը ըլլալը յայտնելով եւ տեսնելով որ ղիտողութիւն ընող չկայ, քուէի դրաւ:

Ժողովն ընդհանուր հաւանութեամբ որոշեց յղել Նախաձեռնութեան ղիւանին.

3.

Ընդհ. ժողովոյ անցեալ նիստին հին պարտուց բարձմանը բանիւ եւ գործով նպաստող անձանց ոմանց յանուն Ազգին շնորհակալութիւնն յայտնելով՝ երախտագիտական պարտք մը կատարած եղանք: Բայց այդ պարտքը լիովին կատարած լինելու համար՝ Ընդհ. ժողովը չմերժեց, կը յուսամ, իր շնորհակալութիւնը յայտնել եւ հետեւեալ անձանց:

Ա. Բոլոր անոնց, որք Ազգէն ունեցած պահանջին երկար տարիներէ ետք — եւ այն զգալի զեղչերով — հազիւ հազ ստացան:

Բ. Բոլոր անոնց, որք իրենց կարողութեանը չափով մասնակցեցան հին պարտուց բարձմանը:

Գ. Բոլոր անոնց, որք աջակցեցան Խրիմեան Սրբազանին հին պարտուց բարձման գործը յաջողցնելու համար:

Դ. Եւ վերջապէս Խրիմեան Սրբազանին, որ սկիզբն ըրաւ հին պարտուց բարձման գործին եւ մեծ աշխատութեամբ յաջողեցաւ անոր կէսին չափը վճարելու:

Այս առաջարկութիւնս ընդունելով՝ Ընդհ. ժողովը երախտագիտութեան եւ միանգամայն արդարութեան պարտք մը կատարած կը լինի

6 Դեկտ. 1874 Զ. Իֆէֆէան

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Կարծեմ այս խնդիրն անցելոյն վերաբերութիւն ունեցող խնդիրներէն մէկն է, եւ իբր այն՝ նախորդ վարչութեանց համարատուութեան հետ լծորդեալ պիտի ներկայանայ Ազգային ժողովին: Զէ որ այդ համարատուութիւնը արդէն յղուեցան Նախաքննիչ ղիւաններուն:

ԶԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛, յղուեցան:

ՆԱԽԱՊԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Ամենուս ծանօթ է որ շատ մը ազգայինք ասկէ առաջ աջակցեցան Խրիմեան Սրբազանին, եւ սա յաջողեցաւ ազգային հին պարտքը կիսով չափ վճարել. ասի շնորհակալութեան արժանի է. նոյնպէս այս շնորհակալութեան մասնակցութեան իրաւունք ունին անոնք՝ որ Ազգէն ունեցած առնելքնուն մէկ մասը զեղչեցին: Ուստի կըրնանք ընդհանուր շնորհակալութիւն յայտնել:

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՅ.— Ազգային ժողովը շնորհակալ է այն ամեն անձանց համար ալ որ իրենց կարեացը համեմատ Ազգին կ'օգնեն. ասի բնական պարտք մ է. անշուշտ ամեն ոք այս պարտականութեան հետ կապուած է. ուստի այս ինչ կամ այն ինչ պարագաներու պատճառաւ, այս կամ այն անձինք աշխատած ըլլանուն համար, Ազգային ժողովէն մասնաւոր շնորհակալութիւն պահանջել ձախող սկըզբունք մ'է՛ զոր ես չեմ կրնար ընդունիլ. վասն զի ժողովոյն զգացմանը կը գպլէ եւ կը նշանակէ թէ ժողովն այդ շնորհակալութեան զգացումը չունի. ընդհակառակն՝ ինչպէս արդէն ըսի, ժողովը միշտ շնորհակալութիւն ունի ամեն անոնց՝ որ կը օրին նիւթապէս եւ

բարոյապէս օգնել Ազգին: Իսկ մասնաւոր շնորհակալութիւն յայտնելն իրեն չվերաբերիր, Ըսածս մնալ չհասկցուի. շնորհակալ լինելուն դէմ չեմ. Յ փարայէն մինչեւ Յ միլիոն շնորհողին ալ շնորհակալ ենք, մեր բնական պարտքն է այս՝ զոր կատարելէն չենք փախչիր, միայն մասնաւորակի շնորհակալութիւններն Ազգ. ժողովոյ վերաբերութիւն չունին. յանձնենք Վարչութեան եւ իւր ճիւղերուն՝ որ այդ մասին հարկ եղածն իրենք կատարեն:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Մազլըմեան էֆ. կը սխալի երբ բնական պարտք կը ճանչնայ պարտուց բարձման համար հանդանակողաց մասնակցութիւնը. իւրաքանչիւր ազգայնոց պարտքն իրեն սահմանեալ ազգային տուրքը տալն է. անկէ դատ տուածնին նուէր մ'է Ազգին, որ շնորհակալութեան արժանի է: Երբ ժողովն ասանկ պարագաներու մէջ իւր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնէ, ուրիշ նպատակաւ չէ: Բայց եթէ այդ ազգայինք ուրիշ պատեհաւ ալ Ազգին օգնելէ ետ չքաշուին, եւ ուրիշ ազգայինք ալ խրախուսին. ուստի խիստ կարեւոր է այսպիսի պարագաներու համար միշտ շնորհակալութիւն յայտնել այն անձանց, որ իրենց ազգային տրոց պարտքէն դուրս՝ ձեռնառու կ'ըլլան կեդրոնական մտուակին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Այս ժողովը որ Ազգին ներկայացուցիչն է՝ պարտաւոր է միշտ հաճութեան եւ գովասանութեան քուէ տալ այն ազգայնոց որ նիւթապէս եւ բարոյապէս կը մասնակցին Ազգին բարեկեցութեան: Ամենափոքր նուէր տուողն ալ մեր երախտագիտութեան արժանի է, խիստ շատ տուողն ալ: Բայց հոս Մազլըմեան էֆէնտիին գովելի ղիտողութիւնը սկըզբունքի մը վրայ կը կայանայ. այն է որ շնորհակալութիւն յայտնել պէտք է: Բայց ներկային մէջ եղած՝ ըստ մեզ ղիտացուած եւ հոս ի պաշտօնէ ճանչցուած քանի մը համար: Գալով անցելոյն, ըստ որում ժողովն արդէն պաշտօնական տեղեկագիր մը չունի ի ձեռին՝ որպէս զի իմանայ թէ ինչ է եղեր, ինչ է ժողովուած եւ որո՞ւ ինչ տուեր են. եւ ըստ որում նախորդ վարչութեանց համարատուութիւնը արդէն Նախաքննիչ ղիւանաց յղուած են, ուստի բնականաբար հարկ կ'ըլլայ նոյն ղիւանաց տալիք տեղեկութեանցն սպասել, ո՞ր եւ իցէ շնորհակալութեան քուէ մը տալէ առաջ:

ԻփէկճԵԱՆ Հ. ԷՖ.— Խնդիրն այս կամ այն պաշտօնէին շնորհակալութիւն յայտնելուն վրայ չէ. խնդիրը պարզ էր, ինչպէս Մատթէոս վարդապետ յայտնեց. երբոր մէկը մասնակցեր է իւր կարողութեան չափով Ազգին օգնելու, — կարողութեան չափով կ'ըսեմ, վաստն զի այդ օգնութիւնը կրնայ մեծ կամ փոքր ըլլալ: — պէտք է գործը քննել եւ երախտագիտութիւն յայտնել, ինչպէս եղաւ անցեալ անգամ. եթէ Երեսփոխանական ժողովը այդ երախտագիտութեան պարտքը ճանչցած է, ես կ'ըսեմ որ բոլոր այն անձինք՝ որոնք մասնակցեր են հին պարտուց վճարման, արժանի են ժողովոյն շնորհակալութեանը, մասնաւոր այն անձինք՝ որ շատ ատեն աւուր հացի կարօտ գտնուելով՝ իրենց առնելիքը չեն պահանջած, եւ առած ատենին զեղջամբ առեր են՝ Սկզբունքին վրայ տարածիլ չեմ ուզեր. մասնաւոր զէսքի մը վրայ է իմ ըսածս. խնդիր մը կայ հին պարտուց վճարման, որուն համար աշխատած են սա կամ նա անձինքը. նիստ մը առաջ ընդունածնիս սկզբունք չէր, մասնաւոր պարտադայ մ'էր եւ ընդունուեցաւ, որուն ես ալ մասնակցեցայ ամենայն սիրով. նոյն պարագայն է որ հիմա ալ կ'եղնէ, եւ ասոր զէմ ընդդիմութիւն կը յարուցուի համարատուութեան եւ սկզբունքի խնդիրներով: Ես ուրիշ բան չեմ ըսեր, այլ թէ պարտքս կատարեցի առաջարկութիւն ընելովս. իսկ ժողովոյն քուէին վրայ չեմ կրնար բռնանալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Ասոր պատասխանը հիմակուան ըսածներս են. ուստի աւելորդ կը համարիմ կրկնել:

S. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Իփէկճեան էֆ. ի առաջարկութիւնը նախորդ վարչութեան համարատուութեան ուղղակի վերաբերութիւն չունի, այլ եթէ ունի անուղղակի է. նախորդ Պատրիարքն իւր օրովն Ազգին հանգանակութեանը ղիմեր, ստակ ժողովեր եւ պարտապահանջից վճարեր է. չենք գիտեր թէ շնորհակալութիւն յայտնելու պարտաւոր պիտի ըլլանք այդ մասին, Բայց սն ճշմարիտ է որ պարտապահանջները շատ երկար սպասեր են. ճշմարիտ է որ ասոնք իրենց առնելիքէն զեղջ ալ ըրեր են. նմանապէս ճշմարիտ է որ այն ատեն այնչափ ժողովուրդ մասնակցած է ազգային պարտուց հանգանակութեան. ուստի ասոնց շնորհակալութիւն տալ պարտքերնիս է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Խնդիրը պարզ է. առաջարկութիւն մը եկած է Իփէկճեան էֆէնտիէն, որ անցեալ գործողութեան մը համար շնորհակալութիւն կը խնդրէ. Դիւանը դիտողութիւն ըրաւ թէ Համարատուութեան քըննութեանց պահուն կը վերաբերի այս խնդիրը. հիմա ժողովին կը հարցնեմ թէ կ'ընդուննի հիմակուան յիշեալ առաջարկութիւնը, եթէ կ'ուզէ այդ խնդիրը Համարատուութեան պահուն թողուլ:

Ժողովը միաձայն որոշեց Համարատուութեան պահուն թողուլ այս խնդիրը:

Զորբորդ՝ Ատենապետ Պէյ յիշեցնելով թէ նախընթաց նիստին մէջ հին ատենագրութեանց ընդունելութեան միջոցին որոշուած է անցեալ տարուց սեպտեմբեր 28 ի նիստին բոլոր թըղթերը ներկայ նիստին մէջ կարգալ եւ արձանագրել, հրաւիրեց Ատենապետը էֆէնտին զանոնք կարգալ:

Ահաւասիկ նոյն թղթերը.

x

ՊԱՏՃԷՆ Յ1 ԵՐԵՍՓՈՒԱՆԱՑ ՀԱՆՐԱԳՐՈՅՆ.

Վսեմաշուք Ատենապետ Ազգային Երեսփոխանական ժողովոյ.

Ազգային Վարչութեան ներկայ տաղնապալից վիճակին մէջ, ինչպէս տեսնուեցաւ Ազգ. Երեսփ. ժողովոյ վերջին նիստի ներկայացեալ Քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագրէն, հարկ կը տեսնեմք եւ կ'առաջարկեմք որ՝

Նախ՝ Երեսփ. ժողովոյ յառաջիկայ նիստը դռնփակ ըլլայ, Երեսփոխանաց ազատ վիճարանութեան եւ իրենց պարտաւորութիւնը խղճի մտօք կարենալ կատարելու համար:

Երկրորդ՝ Ղալաթիոյ եկեղեցին ըլլայ, ինչպէս մինչեւ ցարդ կ'ըլլար եւ ուր ղիւրութիւն կայ Երեսփոխանաց երթեւեկութեան:

25 Օգոստոս 1875

1. Թաղէոս Եպիսկոպոս
2. Գրիգորիս Եպիսկոպոս
3. Նիկողայոս Եպիսկոպոս
4. Խորէն Եպիսկոպոս Նար-Պէյ
5. Մամբրէ Եպիսկոպոս
6. Յովհաննէս վարդապետ Փափազեան

7. Ամբրոսիոս վարդապետ Իսկէնտէրեան
8. Մատթէոս վարդապետ Իզմիրլեան
9. Գէորգ քահանայ Արծրունի
10. Յարութիւն քահանայ Սերովբեան
11. Գրիգոր քահանայ Աճէմեան
12. Խորէն քահանայ Փէչիվանեան
13. Առաքել Սիսակ Տատեան
14. Թ. Պէկեան
15. Յ. Մարգարեան
16. Օգսէն Խօճասարեան
17. Պօղոս Ժամակոչեան
18. Բարսեղ Հալաճեան
19. Հ. Ս. Ալաճաճեան
20. Մատթէոս Ա յվատեան
21. Մ. Յակոբ Սարգիսեան
22. Յովհաննէս ձիւճեան
23. Միհրան Պահճէգալուսեան
24. Տ. Գ. Սինանեան
25. Գ. Զարդարեան
26. Յ. Ե՛մէնիճեան
27. Խ. Ղազարոսեան
28. Բարթող Քիւրքճիպաշեան
29. Սենեքերիմ Մանուկեան
30. Մանուկ ձ. Արապեան
31. Յ. Արշակ
32. Սենեքերիմ ձարտարապետ
33. Յարութիւն Թիւլեան
34. Պօղոս ձիւճեան
35. Ալիքսան Խորասանճեան
36. Ստեփան Խնդիրեան
37. Մ. Մամիկոնեան
38. Յովսէփ Աղամճանեան
39. Տելեմաք Էքսէրճեան
40. Պետրոս Փափազեան
41. Բ. Ղազարոսեան
42. Ռուբէն Կիւմիւշկէրտանեան
43. Պօղոս Մովսիսեան
44. Մ. Կարապետ Խաչիկեան
45. Տօքթօր Կ. Իւթիւճեան
46. Ասապա Իկիտպաշեան
47. Մ. Սիոս Սահակեան
48. Պետրոս Քէրէստէճեան
49. Սարգիս Արապեան
50. Եսայի Անուխեան
51. Պետրոս Միսաքեան

2

51 Երեսփոխանաց համակարծիք ըլլալին

յատուկ նամակաւ Ազգ. ժողովոյ Դիւանին հազորդած են հետեւեալ Երեսփոխաններն ալ.

1. Գարեգին վարդապետ Թաթարեան
2. Ներսէս վարդապետ Ասլանեան
3. Արիստակէս քահանայ Մամբրէեան
4. Սիմոն Միքայէլեան
5. Մարտիրոս Տիլէեան

Ազգ. ժողովոյ ղիւանէն յատուկ նամակալ իրենց ալ համակարծիք ըլլալը հազորդեցին Ս. Պատրիարքին՝

6. Յարութիւն Տատեան
7. Ստեփան Ասլանեան

որով դռնփակ նիստ եւ Ղալաթիոս գումարուիլ ուղղը Երեսփոխանաց թիւն ելաւ 58 ի:

3

Մեծապատիւ Երեսփոխան էֆէնտի.

Ազգային Երեսփոխանական ժողովոյ վաթսուն եւ եօթներորդ գումարման համար նոյն ժողովոյ Պատկառելի Դիւանէն մեզ ուղղեալ հետեւեալ որոշումն ընդունելով՝ կը փութամք զայն իւր ամբողջութեամբ ուղղել առ Զեղ իւրեւ հրաւիրագիր, եւ խնդրել որ բարեհաճիք գալ ժամ 6 ին եւ Զեր նուիրական պարտաւորութիւնն սրտի մտօք կատարել, նպատակ ունենալով Ազգին սէր, միութիւն եւ խաղաղութիւն. առ որ յամենայն սրտէ ցանկացող

Պ. Կ. ԽԻՒՄԵԱՆ

1875 Սեպտ. 25
Ի Պատրիարքարանի Հայոց
Կոստանդնուպօլիս

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Ազգային Ընդհանուր ժողովոյ վերջին նիստին դռնփակ ըլլալը խնդրող Երեսփոխանաց Դիւանին մատուցած հանրագրին առթիւ ծագած անհամաձայնութիւնը, ժողովին սովորական գումարման արդեւք յարուցած ըլլալով, Դիւանս Զեր Սրբազնութեան հետ խորհրդակցելէ ետեւ, որոշուած էր նախ՝ այդ անհամաձայնութեան բուն շարժառիթը վնասել, եւ եթէ կարելի է՝ բառնալ, եւ ապա դռնբաց կամ դռնփակ նիստ ընելու որոշումն ընել:

Հետեւապէս Դիւանս սոյն խնդրոյն վրայ իրարմէ տարբեր կարծիք ունեցող Երեսփոխաններէն շատերուն հետ մտերմաբար բանակցելէ ետեւ, այսօր երջանիկ կը համարի զինքը:

Ձեր Սրբազնութեան հաղորդելու թէ հանրագիրն ստորագրող երեսփոխանք հանդիսական ժողովրդեան ճշուամէն ազատ մնալու միտք եւ գիտատրու թիւն ունեցած չեն, այլ արդի ազգային խնդրոց բնութենէն հարկադրեալ ուզած են այսպէս ժողով ընել, որ ըստ ինքեան ալ աւելի երաշխաւորութիւն կ'ընծայէ բարեկարգութեան:

Արդ՝ քանի որ հանրագիրն ստորագրող երեսփոխանաց գիտատրու թեան չարաչար մեկնութիւն է այս անհամաձայնութեան բուն շարժան ժամ թիւր. եւ միւս կողմէն հանրագիրը շատորակող երեսփոխանք ալ յայտարարած են թէ՛ զանփակ նստի սկզբունքին դէմ չեն, այլ հանրագրին նպատակին վերադրեալ պատճառին համար միայն չէին կրնար ընդունիլ զայն, կը յուսամք որ մեր այս յայտարարութեան անկեղծութեանը վրայ ոչ ոք տարակուսելու առիթ կ'ունենայ, եւ յուզեալ մաքրն հանդարտելով երեսփոխանք միահամուռ կը յիշեն իրենց նուիրական պարտաւորութիւնը եւ Ազգին արդի վիճակին մէջ խնդրոյն բնական պահանջումն նկատողութեան անհերժելի ամենքն ալ կը համաձայնին յառաջիկայ նիստին գնահատել ըլլալուն կարեւորութեանը վրայ, զոր Վիւանը ի պաշտօնէ իրերէ իւր որոշումը պարտք կը համարի առաջարկել Ձեր Սրբազնութեան:

Խնդրելով միանգամայն, որ եթէ Ձեր Սրբազնութիւնն ալ կը հաւանի Վիւանին այս առաջարկութեանը, բարեհաճի բոլոր երեսփոխանները հրաւիրել մասնաւոր նամակաւ ի գըռնփակ ժողով յառաջիկայ ուրբաթ օր 28 Սեպտեմբերի, Ղալաթիոյ եկեղեցին, ներփակեալ խնդրոց կարգին համեմատ ատենը բացուելու պայմանաւ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ
Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ
Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

- Կարգ խնդրոց Մեղակներ 28 խոստենին
1. Վաւերացումն նախորդ ատենագրութեանց.
 2. Վաւերացումն նորընտիր երեսփոխանաց.
 3. Հրաժարումն Քաղ. ժողովոյ անդամոց.
 4. Սահմանադրական անդորձադրութեան արամադրութեանց ներկայացումն ի դիմաց Ս. Պատրիարքին.
- Ատենագրող Ազգ. Ընդհ. ժողովոյ
ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

Այսօր՝ Սեպտ. 28, ժամ 9, թէ՛ եւ երեսփոխանաց մեծագոյն մասը ներկայ ըլլալով, Վիւանը տրամադիր էր պատեն բանալու. սակայն ժողովրդեան բազմութիւն մինչեւ իսկ ժողովոյ ատենին կից ժամատուն խանելով, եւ Նախագահ սրբազանին գտնուած սենեակը դաւլով, շշուկ եւ աղմուկ յարուցին. ուստի սոյն պարագայի մէջ ատենն անարդարեւ պէտք եղած հանդարտութիւնն ձեռք բերելու երկու միջոց մտածեցինք. մէկը՝ Սրբազան Պատրիարքի ձեռք յորդոր կարգալ ժողովրդեան՝ որ ձգէ զերեսփոխանութիւնն խաղաղութեամբ խորհուրդ ընել. ասոր՝ Սրբազան Պատրիարքը պատասխանեց որ «այդ միջոց յաջողունելու ժամանակն անցած է»:

Երկրորդն է՝ Տէրութեան միջոցաւ ժողովրդեան խռովարարները դուրս հանել, եւ մնացեալներուն հանդարտութիւնը երաշխաւորելով երեսփոխանաց ատենն բանալ. այս երկրորդ միջոցի համար ոչ Սրբազան Պատրիարք եւ ոչ Վիւանի անդամք հաճութիւն չը տուին: Ուստի սոյնպիսի պարագայի մէջ ատենն բանալն անկարելի դատելով, Վիւանը սոյն յայտարարութիւնն ստորագրեալ կը մատուցանէ Սրբազան Պատրիարքին, եւ կը հրաւիրէ զՆորին Սրբազնութիւնն որ ցրուէ այս օրուան համար զերեսփոխանս ինչպէս հրաւիրեց զնոսա ի ժողով:

Ղալաթիա ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ
28 Սեպտ. 1875 Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ
Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

(Ասկէ ետքն էր որ Սրբազան Պատրիարք Հօր նախագահութեամբ ատենը բացուեցաւ, բայց անմիջապէս դոյրեցաւ):

Ամենապատիւ Սրբազան Հայր.
Ազգային վարչական իշխանութեան զըտնուած զժառնգ վիճակին մէջ անկարելի լինելով մեզ այսուհետեւ Ընդհանուր ժողովոյ Վիւանի անդամութիւն ընել, գրովս Ձեզ կը մատուցանեմք Ատենագրութեան հրաժարական

նիս եւ կը խնդրենք որ շնորհ ընէք հաղորդել զայն որու որ անկ է:

Պէշիկթաշ
28 Սեպտ. 1875 ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ
Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Վսեմաշուք Ատենագետ Ազգային Ընդհ. ժողովոյ.

Անցեալ եօթնեկի ուրբաթ իրիկուն գիշերուան ժամ երկուքին անակնկալ հրաժարագիր մի ընդունեցի, որ Ձեր Վսեմութեան եւ Ասլանեան Վսեմ Ս. փաշայի ստորագրութիւնները կը կրէր:

Ընդհանուր ժողովոյ Վիւանի Ատենագետութեան հրաժարիլ կ'ուզէք, յառաջ բերելով «Ազգային իշխանութեան արդի զժառնգ վիճակը», որով անհնար կը լինի Ձեզ Ազգային ժողովոյ Վիւանին գլուխը կենայ եւ ղեկավարել:

Կ'ընդունիմ Ձեզ հետ որ Ազգը եւ իւր իշխանութիւնը պեկոծեալ է, եւ դժուարին այս փոթորկին մէջ նաւն նաւահանգիստ ուղղել. բայց միթէ այս վտանգաւոր պարագային մէջ Ընդհ. ժողովոյ նաւուն ղեկը թողուլ, խոյս տալ, Ձեր վսեմութեանց վկայեալ արժանաւորութիւնն եւ պարտականութիւնը կը ներքէ, երբ ամէն ժամանակ Ազգին խռովեալ միջոցին ձեզ նման իմաստուն եւ խոհական անձինք արիւար ասպարիզին մէջ մանալով Ազգին խաղաղութիւնը վերահաստատելու միշտ յաջողած են:

Չգիտեմ ինչ պատճառաւ կը հրաժարիք. զոհողութիւն կ'ընէք, որպէս զի Ազգին խռովեալ վիճակը հանդարտի. — ոչ, առաւել եւս կը յուզի: Ներկայ իրաց վիճակին քաջ խելածուա եղիք. այդ զոհը, եւ այդ Յովնանը դուք չէք. մի աճապարէք կ'ազաչեմ. այդ զոհին արժանին ուրիշ անձ մ'է, եւ այդ զոհը մի միայն նորա բաժինն է: Նա քաջ գիտէ թէ այս մրիկը իւր համար է. ուստի նա կ'անխաւմատոյց իւր զոհը օգոստ. օրն. հաւատացէք, մի երկբայիք. այդ զոհը անհրաժեշտ զոհ է. այլ եւս յետս չի դառնար: Խաղաղութեան համար, Ընդհ. ժողովոյ խոստման համար՝ հարկ էր պահ մի սպասել, սպասեցի, եւ շատ է. զի մեր յոյսը եւ ձեր խոստումը հեռացաւ. յիսուն եւ մէկ երեսփոխանք ճշուում հրատարա-

կեցին, աննպատակ չէր այդ. անշուշտ օգոստ. 24 ի վերահաստատութեան կապը խզելու համար էր: Երբէք չեմ զիջանիր որ այդ կապը ուրիշ ձեռք խզէ: Ես ինքնին գիտեմ խզել զայն:

Ուստի կ'աղաչեմ որ ձեր պաշտօնին գլուխը կենաք. ազգային այս տաղնապին մէջ անատեւունչ եւ անկառավար չի թողուք: Ես հրաժարող մի եմ, չեմ կարող ձեր հրաժարագիրը ընդունիլ. ես ինչ որ էի օգոստ. 24 էն յառաջ, նոյն եմ այսօր: Թող չի կարծէ մէկը թէ խօսքս պատրուակեալ բանաստեղծութիւն մի է, ոչ. այլ բացարձակ ճշմարտութիւն, թէ՛ Վրիմեան ոչ եւս է Պատրիարք Հայոց. եւ ինչպէս ձեզ նոյնպէս ընդհանուր երեսփոխանութեան որեւ իցէ կերպիւ յայտարարել ինձ պարտք մնաց, եւ այլ ոչինչ. եւ զայն եւս ընդ հուպ կատարել կը փութամ:

1875 Հոկտ. 2 ԻՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Փոխանորդ Հայր սուրբին ձեռամբ Ձեր Սրբազնութիւնը երկու հրաժարագիր խրկած էր այսօր մեզ:

Ինչպէս որ արդէն յայտնի է, նուազատ Ազգային Ընդհ. ժողովոյ Ատենագետութեան հրաժարեալ եմ. ուստի Ձեր Սրբազնութեան հաղորդած նամակները պարտաւոր եմ ներկայիւս նորէն ձեզ դարձնել, եւ այսու առթիւ կը փութամ իմ խորին յարգանացս նորոգ նուէրը յայտնել:

Իերա ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ
8 Հոկտ. 1875

Վսեմաշուք Գ. Ատենագետ Ազգ. Ընդհ. ժողովոյ.

Թերեւս լսեք եւ գիտէ իսկ ձեր Վսեմութիւնը որ ասկէ առաջ մեր կրկնակի հրաժարագիրն ուղղեցի առ Ա. Ատենագետ Յարութիւն էֆէնտի Տատեան. բայց նա իւր հրաժարիլն յառաջ բերելով մեր հրաժարագիրն աւմեղ վերադարձուց. եւ որովհետեւ Բ. Ատենագետ Վսեմ, Ստեփան փաշան եւս ի միասին հրաժարած է Ա. Ատենագետին հետ, կը մնայ ձեր Վսեմութեան որ ընդունելով մեր հրաժարագիրը մատուցանէք զայն Ընդհ. ժողովոյ ատենին:

այն ճիւղին՝ որուն կը վերաբերի այս խնդիրը, պարտքն է նկատողութեան առնուլ եւ ջանալ յարդիւնս բերել զայն:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Պահ մ'առաջ ի-
փէկճեան էֆ. խօսք մը ըրաւ, համալարծիք
եմ անոր. ամեն խնդիր Վարչութեան յանձնել
անկարելի է. այնքան շատ են մեր գործերն՝
որ Պատրիարքարան եկած նամակներն իսկ կար-
գալու ժամանակ կը պակսի. ուստի ասանկ
կարելոր խնդիր մը չենք կարող մեր վրայ առ-
նուլ, մանաւանդ թէ ձեռնհաս չենք տնօրի-
նել, ինչպէս որ կանխեցի ըսել թէ արդէն
մեք աշխատեցանք, բայց չյաջողեցաւ. եւ
անյաջող մնալուս համար հոս բերել պարտա-
ւորեցայ: Ուստի կրկին կ'առաջարկեմ որ ժո-
ղովն ինք իւր ուշադրութեանը տակ առնու
այս խնդիրը, մի գուցէ անփոյթ մնալով ա-
պագային զատապարտութեանը ներքեւ ընկ-
նինք:

ՄԻՍԱՔԵԱՆ Խ. ԷՖ.— Ձեմ ուզեր որ Սըր-
բանուէր Հօր ազդաշէն զիտաւորութիւնն ա-
պագային յուսով մնայ. չեմ ալ ուզեր որ այս
խնդրոյն մէջ անօգուտ քայլեր առնուով ժամա-
նակ վատնուի. եթէ կտակեալ գումարին մաս-
նակից ըլլալ ուղուի՝ չկրնար ըլլալ այդ. եթէ
վարժարանը բաժնել ուղուի, այդ ալ չկրնար
ըլլալ. ասոնք իմ կարծիքս չեն, այլ պատմա-
կան հաստիք են: Մուրատեան վարժարանին
համար Ազգը մէկ բան միայն կրնայ ընել. ու-
րովհետեւ վարժարանը Ազգին որք աղօթը հա-
մար բացուած է, եւ տեսչութիւնը Միթար-
եան Հարց ձեռքն է, Ազգը իրաւունք ունի
այդ վարժարանը բաց պահել եւ ըստ արժան-
ւոյն խնամել տալ եւ հոն աղքատ եւ որք տը-
ղաքներ դրկել. բայց որպէս զի այս աղայք
հասմէական կրօնին ուսումը չառնուն, Ազգը
պարտական է Հայ քահանայ մ'ալ հոն դնել
մեր կրօնքն անոնց ուսուցանելու համար: Այս-
չափ է մեր ընելիքը. իսկ ուրիշ կերպով թէ
եւ մասնաժողով ալ դրուի եւ մէկ երկու տա-
րի մտածուի, որեւէ արդիւնք մը ձեռք բերե-
լու յոյս չկայ իմ կարծեօքս:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Կը կարծեմ թէ
հոս այս խնդրոյն վրայ վիճարանելու տեղը չէ.
անոր համար ըսի եւ դարձեալ կ'ըսեմ թէ Վար-
չութեան գործն է եւ անոր յանձնելու է որ
կտակաց Հոգաբարձութեան ճիւղ ունի եւ ա-
նոր կը վերաբերի այս խնդիրը, հոն խնդրոյն

ամեն կողմը ձեռք եւ լուսարանութեամբ բե-
րէ հոս: Իսկ գալով այն պանդուխտ պատան-
եաց՝ որք զիշերօթիկ դպրոց կ'ուզեն, անոնց
համար ալ եթէ պէտք կայ զիշերօթիկ վարժա-
րանի մը, դարձեալ Վարչութիւնը պէտք է
խորհի այդ կարելորութեան վրայ եւ իւր ա-
ռաջարկութիւնը գրաւոր կերպով հոս բերէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Սրբազան Հօր առա-
ջարկութիւնն երկու խնդիր միանգամայն կը
պարունակէ. մէկն է զիշերօթիկ վարժարանի
մը պէտքի խնդիրը եւ միւսն է Մուրատեան
վարժարանին խնդիրը. եթէ ժողովն ուղէ Սըր-
բազան Հօր այս առաջարկութիւնը նկատողու-
թեան առնուլ, Գաստիարակութեան եւ Կալ-
ուածոց միացեալ զիւանացը պէտք է յղել:
Ուստի այս յղումը քուէի պիտի դնեմ:

Չայս ըսելով Ատենապետ Պէյ քուէի դը-
րաւ, եւ ժողովը միաձայնութեամբ առաջար-
կեալ յղումն ընդունեց:

ԱՄԲՈՂՋԱՅՈՒՄ ՆԱԽԱՔԵՆԻՉ ԴԻՒԱՆԱՅ

Ատենապետ Պէյ Օրակարգին անցնելով
յայտարարեց որ Նախաքննիչ զիւանաց ումանց
պակասած անդամոց ընտրութեանն է կարգը.
եւ նախապէս Խորէն Սրբազանի հրաժարագի-
րը ներկայացնելով, որով Ձեռնհասութեան զի-
ւանին անդամակցութենէն կը հրաժարէր, կար-
ծիք յայտնեց թէ այս հրաժարականն ընդունե-
լի չէ, որովհետեւ Նախաքննիչ զիւաններուն
պաշտօնն առժամանակեայ է եւ պէտք չէ շա-
րունակ այս հրաժարականներով զբաղիլ:

Քուէի դրուեցաւ Խորէն Սրբազանի հրա-
ժարականը, եւ ժողովը միահամուռ չընդու-
նեց զայն:

Խորէն Սրբազան խօսք ուղեց. բայց Ա-
տենապետ Պէյ իւր հրաժարականին ժողովէն
գտած անընդունելութիւնը յայտնելով խնդրեց
որ ժողովին որոշումը յարգէ եւ նորէն հրա-
ժարման խօսք չընէ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ.— Գոնէ խօսք կը
խնդրեմ իմ սրտաղին շնորհակալութիւնս յայտ-
նելու ժողովին՝ ինձ ցուցած համակրութեանը
համար, որ մեծ քաջալեր մ'է աշխատելու.
բայց այժմէն կ'ազդեմ որ ժողովը ներողամիտ
լինի ինձ եթէ չկարողանամ շարունակ աշխա-
տակից գտնուիլ Ձեռնհասութեան զիւանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Ժողովը չընդունիլը
նաեւ առաջարկած պայմաննիդ ալ, եւ յանուն
ժողովին կ'ազդեմ ձեր Սրբազնութեանը, որ
միշտ աշխատակից գտնուի Ձեռնհասութեան
զիւանին:

Դիւանը յայտարարելով որ Կիւմրուէրտան
Ռուբէն էֆէնտին թէ՛ Կալուածոց եւ թէ՛
Գաստիարակութեան զիւանաց միանգամայն
անդամ ընտրուած ըլլալով՝ վերջնորէն միայն
ընդունած է, եւ Կալուածոց զիւանէն կը հը-
րաժարի. անոր տեղ ընտրելի առաջարկեց Ազ-
նաւորեան Յովհաննէս էֆէնտին Կալուածոց
զիւանին համար:

Նոյնպէս յայտնելով թէ Համարակալու-
թեան զիւանի անդամներէն երկուք կը պակ-
սին՝ Արշակ Յակոբոս եւ Պէկեան Թագէոս էֆէն-
տիններուն երեսփոխանութենէ հրաժարած ըլ-
լալուն համար. նոյն զիւանին համար ալ
ընտրելի առաջարկեց Եուսուֆեան Տիգրան եւ
Սախմարաճեան Գէորգ էֆէնտինները:

ԻԻԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ.— Ասկէց առաջ գը-
րաւոր առաջարկութիւն մը մատուցեր էի Նա-
խաքննիչ զիւանաց կազմութեան վրայօք, որ
ժողովէն ուշադրութիւն գտաւ եւ յղուեցաւ.
Նախաքննութեան փախաքելի էր որ պատաս-
խանը շուտով գար այն զիւանէն՝ որուն որ
յղուեցաւ իմ առաջարկութիւնս, եւ ընտրու-
թիւնն ըստ այնմ կատարուէր. որովհետեւ կը
տեսնեմ որ հիմա ալ քանի մը զիւանաց ընտ-
րութիւն պիտի լինի եւ այս կերպով ընտրու-
թիւնները շատ պիտի երկարին:

Իմ առաջարկութիւնս էր չափաւորել դի-
ւաններուն թիւը, որուն շատերն ալ ինձ հա-
մամիտ էին. եթէ այս առաջարկութիւնս ըն-
դունուի, տարակոյս չկայ թէ զիւաններուն
թիւը նուազելով՝ վերջնական ու ամփոփ կազ-
մութիւն մը կը տրուի անոնց: Շատ խնդիր-
ներ իրարու նմանութիւն ունին եւ քանի մը
զիւաններու մէկէն կը յանձնուին կոր, ինչպէս
որ արդէն փորձով տեսանք. ըսել է թէ միա-
ցուցման պէտք կայ. զիւաններուն թիւը
պակսեցնելով, կրնայ այն ատեն անոնց իւրա-
քանչիւրին անդամոց թիւն աւելնալ, օրինա-
կի համար՝ 3 է նէ 5 ի վերածել: Վերջապէս
այս զիւաններուն ժամ առաջ կանոնաւոր եւ
ամփոփ կազմութիւն մը տալն ըստ իս շատ կա-
րելոր է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Շատ աղէկ. Նախա-
գահ Սրբազանէն կը խնդրենք որ չնորճ ընէ
այդ առաջարկութեան պատասխանը ժամ ա-
ռաջ բերել տալ:

ՉԱՅՆԵՐ.— Առաջարկեալ ընտրութիւններն
առ այժմ պէտք է կատարուին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Կ'առաջարկեմ որ
այդ ընտրութիւնները ձեռամբարձով կատար-
ուին զիւանին ցուցած ընտրելեացը վրայ:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ.— Կը ձայնակցիմ
Քրիստոստուր էֆ. ին:

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ.— Ընտրութեանց
գաղանի քուէարկութեամբ ըլլալը պատճառ
ունի. որովհետեւ շատերը զանազան նկատու-
մներով այս կամ այն անձին չեն ուզեր քուէ
տալ եթէ ձեռամբարձով լինի. ուստի գաղտ-
նի քուէ պէտք է, որ անընտարբելի լինի,
ինչպէս որ Կանոնադրութիւնն ալ կը պահան-
ջէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ետ կ'առնում ա-
ռաջարկութիւնս եւ կը ձայնակցիմ որ Կանո-
նադրութեան համաձայն ըլլայ ընտրութիւնը:

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ.— Մաղըմեան էֆ. ին
զիտողութիւնն իրաւացի է, որուն ես ալ կը
ձայնակցիմ. թէ եւ ընտրութեան գործը քիչ
մը կ'երկարի գաղանի քուէով, սակայն հոգ չէ
թո՛ղ ժամանակ զոտուի եւ գործը կանոնաւոր
ըլլայ:

Անմիջապէս գաղանի քուէարկութեան
ձեռնարկուելով ըստ Կանոնադրութեան քուէ-
համարի քննիչ կարգուեցան վիճակաւ,

- Տ. Հմայեակ վարդապետ Դիմաքսեան
- Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան
- Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան
- Յարութիւն » Մարգարեան

Թիւ քուէարկուաց էր 41

Քուէարկութեան միջոցին բացակայութեան
պատճառաւ քուէի չմասնակցեցան,

- Տ. Սիւքիաս քահանայ
- Առաքել էֆէնտի Ալթուն
- Թաղէոս » Թէրխանեան
- Մկրտիչ » Կիւրճեան
- Խաչատուր » Միտաքեան
- Միհրան » Պահճէգաբուլեան
- Կարապետ » Պէրեանց
- Պետրոս » Քէրէտէճեան

կատեր . ոչ սոսկ աշխարհական եւ ոչ սոսկ կրօնական կը նկատեմ մեր այս ժողովը . թէ եւ անունը նոր է մեզի համար , բայց սկզբունքով հին է . մեր նախնի հարց ընդունած ժողովն է այս , կարծեմ թէ ես ալ իբրեւ անոր անդամներէն մին իրաւունք ունիմ քննադատել այդ հակասական վճիռները : Համադոււմար ժողովը քանի մը տարի առաջ դուժարուելով յանցապարտ կը վճռէ Խաչատուր եպիսկոպոսը . քանի մը տարի վերջն ալ կ'եղնէ կ'արդարացընէ . բայց ինչ հիման վրայ , արդեօք նոր տեղեկութիւններ հաւաքեց , լուսաբանութիւններ ձեռք բերաւ եւ ասոնց վրայ հիմնելով ջնջեց հին վճիռը եւ նոր վճիռ տուաւ . — ոչ . ատանկ բան մը չկայ . այլ առջի Համադոււմար ժողովն այնպէս է վճռեր , հիմակուանն ալ ուրիշ կերպ որոշեր է : Այս մասնաւոր պարագայն պէտք է մեզի խրատ լինի , պէտք է հասկնաւք թէ դեռ խառնաշփոթ վիճակի մէջ է խնդիրը . երբ ժողով մը խնդրոյ մը վրայ որոշում տուած է , յետոյ համադր ժողով մը կուգայ նոյն որոշումը կը ջնջէ , այս վերջին որոշումն երբ մասնաւանդ հակասական է առաջնոյն , գործադրութեան չկրնար ենթարկուիլ . ընականաբար ուրիշ բարձրագոյն ատեանի մը պէտք է յանձնել . ըստ որում խնդիրը կրօնական է : Ետեք կը կարծեն ինչպէս ես ալ անոնց համամիտ պէտք էր լինէի թէ՛ այդ բարձրագոյն ատեանըն իջմիածնի սինօզն է՝ նախագահ ունենալով ամենայն Հայոց Ա.Ե.Ն. Կաթողիկոսը . սակայն որովհետեւ գիտենք թէ Եջմիածնի սինօզըն օրինաւոր ժողով մը չէ , ոչ եկեղեցական եւ ոչ աշխարհական անդամներ ունի՝ որոնք Ազգէն ընտրուած լինին , այլ միայն իւր նախագահն որ է Ա.Ե.Ն. Կաթողիկոսը , Ազգին կողմէն ընտրուած է . եւ որովհետեւ գիտենք որ մեր Հայաստանեայց եկեղեցին չէ թէ անձանց , այլ օրինաւոր ժողովոյն կուտայ գերիշխանութիւնը , զի չընդունիր այդպիսի սկզբունք մը՝ որ պապական սկզբունք մ'է . — եւ մեք կը յարգենք մեր եկեղեցւոյ այս ազատութիւնը , ասոր համար է որ չպահանջեր թէ սոսկ եկեղեցականէ կազմուած լինի այդ ժողովը , զի եկեղեցին թէ եկեղեցականէ եւ թէ աշխարհականէ կը բաղկանայ եւ ասոնց մէջ բաժանում չընդունիր . — ուստի մեր ալ պարտքն է ՚ի նախնեաց մեզ աւանդուած այս սկզբունքը պինդ բռնել , եւ այս ժողովը որ նախ-

նի հայոց ընդունած ժողովն է , պէտք է իրաւասութիւն ունենայ քննել այս խնդիրը : Ենչպէս որ մասնաւոր առթիւ մը Սրբազան Պատրիարքէն ալ լսեցի երբեմն թէ մեր նախնիքնեքէն մեծն Վարդան եւ Եղիշէ վարդապետ միշտ իրարմէ չէին բաժնուէր . եւ յիրաւի պէտք չէ դատ նկատուիք . վասն զի եթէ անոնք իրարմէ դատ նկատենք , այն ատեն դատ իրենց շահերը կը մտածեն . ինչպէս ուրիշ ազգաց մէջ կը տեսնենք , որոնք այդ բաժանման դառն հետեւանքը կը կրնն ցարդ :

Համադոււմար ժողովն իւր երկրորդ որոշմամբն օրինաւոր կը դանէ Խաչատուր կաթողիկոսի ընտրութիւնն . բայց ապօրինութիւնը հաստատելու համար ոչ մեծ հանձար ունենալու ենք եւ ոչ ճարտարութիւն . եթէ այսպիսի հակասական որոշումներ արձակելու ըլլանք , ուրիշ բան ըրած չենք ըլլար , այլ մեր ձեռքով Ազգին մէջ անխնայութիւնը քաջալերած կ'ըլլանք : Այն բանն որ այսօր Աղթամարայ կաթողիկոսին գլխուն պատահած է , կրնայ ըլլալ որ վաղն Եջմիածնի կաթողիկոսի ալ հանդիպի . մէկը կ'եղնէ կաթողիկոսը կ'ընդունի եւ միւսը չընդունիր . ասկէ բաժանում մը յառաջ կուգայ եւ կրօնական իշխանութիւնն ստիպուած կը համարի կատարուած իրողութիւն մը օրինաւոր գտնելու : Ըսել կ'ուզեմ թէ Կրօնական իշխանութիւնն եթէ այս կէտերը նկատողութեան առած ըլլար , տարակոյս չկայ թէ այդ մեծ սխալը չպիտի գործէր . այս ըսելովս քաւ լիցի թէ Խաչատուր կաթողիկոսը դատապարտելու միտք ունենամ . այլ իմ նպատակս է քննել Կրօն . իշխանութեան վերջին որոշումը , որ ըստ իմ կարծեաց վերջին աստիճանի խակ է եւ անհեռատես :

Արդ՝ գալով թէ խնդրոյն կրօնական մասն ինչ կերպով եւ ո՛ւր գտնելու է իւր լուծումը , ասոր վրայ այսօր խօսիլն աւելորդ կը համարիմ , քանի որ անմիջապէս գործադրութիւն չպիտի ըլլայ . ուստի երբ քաղաքական մասը քննուի եւ հասուն տեղեկագրով մը ներկայանայ Ազգային ժողովին , այն ատեն կարգը կուգայ կրօնական մասին , եւ այն ատեն առաջարկութիւն մը ունիմ ընելիք , որ կը կարծեմ թէ խնդրոյն լուծումը պիտի գիւրացնէ , Իսկ մինչեւ այն ատեն ինչ պիտի ըլլայ Աղթամարայ ժողովրդին վիճակը , պիտի թողնենք որ իւր աստիճան վիճակին մէջ շարունակէ . — ոչ . այլ

մեր պարտքն է անոնց այս վիճակին ալ անմիջապէս դարման մը տանիլ . որովհետեւ 10 տարի առաջ կատարուած քրէական յանցանք մը այսօր քննելու պիտի ելնենք . թէեւ երկրիս օրինաց տեղեկ ըլլալու բաղդը չունիմ , բայց կարծեմ թէ շատ դժուարին է եւ գրեթէ անկարելի 10 տարուան կնճռոտ խնդիր մը շուտով քննել եւ վերջացնել . ուստի այս երկրւոյն ունենալով կ'առաջարկեմ որ ժողովն կամ ինք ուղղակի որոշում մը ընէ եւ կամ յանձնէ Վարչութեան՝ կարուկ դարման մը խորհիլ թեմակահաց վիճակին նկատմամբ :

Տ. ՄԱՏՅԵՆՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ . — Ո՛չ իբրեւ տեղեկաբեր՝ Իրաւասութեան եւ Ձեռնհասութեան միացեալ Նախագահնիչ դիւանաց կողմէն եւ ոչ իբր Եկեղեցական Համադոււմար ժողովոյ անդամ յանուն նոյն ժողովոյն , այլ իբրեւ երեսփոխան պիտի խօսիմ Եփէկճեան էֆ. ին ընդդէմ Եկեղեցական Համադոււմար ժողովոյ մէջ բերած առարկութեանցը պատասխանելու համար : Եփէկճեան էֆ. նախ իւր խօսքերուն մէջ յիշեց թէ այս Ընդհ. ժողովն՝ այն ժողովը գիտեմ , որն որ հին ատենը կը դուժարէր յանուն Եկեղեցւոյ . թէ այս ժողովն ձեռնհաս է Եկեղեցական Համադոււմար ժողովոյ վճիռները քննելու եւ թէ ուրիշ ձեռնհաս ատեան բնտնելու պէտք չկայ , յարելով միանգամայն թէ Ս. Եջմիածնի Ա.Ե.Ն. Հայրապետին քով եղող սինօզն ալ անձեռնհաս է , վասն զի Ազգին կողմէն նա չէ ընտրուած :

Որպէս զի խնդիրն պարզուի եւ լուսաբանուի , նախ սոյն այս կէտերուն վրայ մէկ քանի պատմական տեղեկութիւններ պիտի յառաջ բերեմ , եւ ապա խնդրոյն մէջ մտնեմ եւ հաստատեմ թէ Եկեղեցական Համադոււմար ժողովն երկու վճիռ չունի , ինչպէս կ'ըսուի , այլ մէկ վճիռ :

Մեր Եկեղեցական պատմութեան մէջ կը տեսնենք որ զանազան ժամանակ կրօնական ինչ ինչ խնդրոց համար Եկեղեցական Ընդհ. ժողովներ կազմուեր են խառն ընդ աշխարհականս . բայց չէ թէ այս Ազգ. ժողովին պէս 140 թուոյն 120ը աշխարհականներէ եւ միայն 20ը եկեղեցականներէ բաղկացած , այլ 140 ին 120ը եւ թերեւ 155ը եկեղեցականներէ կազմեալ : Այսպէս գուժարուած է Սիոն Կաթողիկոսի օրով Պարտաւի մէջ Ազգային Եկեղեցական Ընդհանուր ժողովը ուր եկեղեցական խիստ

բարձր խնդիրներու վրայ խօսուած է՝ ինչպէս Մկրտութեան խորհրդոյն եւ Սուրբ գրոց քանի հատ եւ որոնք ըլլալուն վրայ . ասանկ եղած են եւ այլ ազգային եկեղեցական ժողովները , ինչպէս գրուած կան Եկեղեցական պատմութեան մէջ . հետեւապէս այս ժողովն չկրնար կրօնական խնդրոց մէջ իբրեւ Եկեղեցական Ընդհ. ժողով իրաւասութիւն ունենալ եւ մինչեւ իսկ Տաճկաստանի Եկեղեցական Համադոււմար ժողովոյն վճիռը քննելու ձեռնհաս ատեանն ըլլալ . զի Սահմանադրութիւնն ալ իր հաստատութեան՝ այն է 1860 թուականէն ի վեր այդ ժողովոյն գոյութիւնը ճանչնալով հանդերձ՝ զանի այս Ազգային ժողովոյն պատասխանատու ըրած չէ :

Մեր Հայաստանեայց եկեղեցւոյ ընդհանրական Հայրապետին քով բնաւ Սինօզ անունով ժողով եղած չէ , ինչպէս կ'ստուգէ Եկեղեցական պատմութիւնը . 1856 թուականէն սկսեալ կը գտնենք այդ սինօզ անուն ժողովը , որուն ուսկից ծագած ըլլալը արդէն յայտնի ըլլալով հարկ չեմ տեսներ հիմա հոս բացատրել : Մեր Հայրապետներն ի հունին իրենց քով գործակատար այսինքն փակակալ , դրան եւն կախկոպոսներ ունէին . որոնք սինօզ չէին կազմեր . Հայրապետներն արընթիւր ունենալով երեք Տիեզերական Սուրբ ժողովոց եւ ազգային Եկեղեցական ժողովոց սահմանադրութիւնքը եւ որոշումները՝ անոնցմով կը սօրիանէին ամէն կրօնական խնդիրները . իսկ երբ պատահէր անանկ խնդիր մը որ արդէն կանոնադրեալ չէր , ձեռնհասութիւն չունէին ինքնին գործելու եւ նոր կանոն մը դնելու կամ որոշում մը տալու . այլ թեմական եպիսկոպոսները՝ վանահայրներն ու վարդապետները եւ հմուտ աշխարհականները ի ժողով կոչելով անոնց խորհրդակցութեամբ կը տնօրինէին եւ նոր կանոն կը դնէին : Ինչպէս մեր արդի Ա.Ե.Ն. Հայրապետն ալ Սոյ խնդրոյն առթիւ առ Ազգային ժողովս ուղղած Կոնդակին մէջ կը հաստատէ մեր սոյն ըսածը , իր նախագահութեանը տակ կազմուած այս տեսակ ժողովով մը արնօրինելու պէտքը զգացնելով : Այսօր Տաճկաստանի մէջ իսկ սինօզի անուն չկայ . Ազգն իր օրինադրքին մէջ ըսած է թէ՛ ուղղակի Ա.Ե.Ն.փառ Կաթողիկոսին կը դիմէ ի կրօնական խնդիրս , երբ Եկեղեցական Համադոււմար ժողովն իր ձեռնհասութեանէն վեր համարի

խնդիրը եւ երբ հարկն ստիպէ : ձիւզ այսպէս եղաւ իբր Աարչութեան նախորդ կրօն. եւ Քաղ. ժողովներն ինչ ինչ խնդրոց համար բանակցեցան Վ.Ե.Ն. Հայրապետին հետ : Իսկ սինոզին հետ իբրեւ սեղական ժողով մը մասնաւոր անձանց յանձնարարականի մասին միայն բանակցութիւն կ'ըլլայ : Աւստի եւ պատմական այս ստուգութեան առջեւ Վ.Ե.Ն. Հայրապետն Եկեղեցական ժողովներով կանոնադրեալ եւ որոշեալ խնդրոց համար ունի ձեռնհասութիւն վճարելու . եւ Եկեղեցական ընդհանուր ժողովով լուծել խնդիր մը՝ որ նոր է եւ չէ կանոնադրեալ արդէն :

Եկեղեցական Համագումար ժողովոյն մի եւ նոյն խնդրոյ վրայ տուած վճիռներուն համար հակասական են ըսաւ Իփէկճեան էֆէնտի . եւ արդարեւ ըստ երեւութիւն այս վճիռները երկուք եւ իրարու հակառակ են . վասն զի պատճառաբանութիւնները կը պակասին . եւ Ազգ. ժողովը տեղեկութիւն չունի թէ ինչ փաստեր ունէր Համագումար ժողովն , իր մէկ որոշումն փոխելուն մէջ : Սակայն գիտնալ պէտք է թէ . որ եւ է ժողով մը իր մէկ որոշման պահանջները տեսած ատեն զայն փոխելու ձեռնհասութիւնն ունի . զայս ընելով հակասութեան մէջ ինկած չըլլար երբէք : Ինչպէս Ազգային ժողովը ալ երբեմն այնպիսի որոշումներ ըրեր . եւ յետոյ տեսնելով որ թերութիւններ կան անոնց մէջ անմիջապէս թերի գտածը փոխելու նոր որոշմամբ առաջինը յետս կոչել է : եւ կը յիշեմ թէ ասանկ դէպքեր 1870 ի բացումէն ի վեր տեղի ունեցած են . միթէ ասով հակասութեան մէջ ինկած է Ազգային ժողովս . ոչ բնաւ : Ասանկ ալ Եկեղեցական Համագումար ժողովը վճիռ մը տուեր է խնդրոյ մը վրայ , եւ ի վերջոյ անոր թերութիւնը տեսնելով փոխել է զայն : Համագումար ժողովը անոխալ չէ . զի մեր Եկեղեցին ընդունած չէ եւ չընդունիր այդ սկզբունքը . սլապական Եկեղեցին կ'ընդունի այդ անսխալականութիւնը :

1866 ին Եկեղեցական Համագումար ժողովը դուժարուեր է Արարատեան մայր աթոռոյ կաթողիկոսական ընտրելեաց ցանկը պատրաստելու համար միայն . այս ցանկը պատրաստուելէն վերջը Աղթամարայ եւ Սոս կաթողիկոսական խնդիրներն ալ նոյն ատենին մէջ դրուեր են . Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյ մասին անուամբ տեղեկութեանց վը-

րայ, աւելորդ է ըսել թէ առանց քննութեան որոշում եղեր է թէ անվաւեր է Խաչատուր Երրբազանի կաթողիկոսութիւնը . քանի որ իր նախորդին կենդանութեան ատեն օծուեր է : Սոսոյգ է , երեւփոխան Տեարք , թէ Պետրոս կաթողիկոսի կենդանութեան ատեն Խաչատուր Երրբազան կաթողիկոս օծուեր է . բայց հարկ է գիտնալ որ եկեղեցին ունի օրէնք մը , որով ազատ է պաշտօնանկ ընել վանահայր մը , առաջնորդ մը եւ կաթողիկոս մը՝ երբ տեսնէ որ անոր պաշտօնավարութեան մեջ մնալը Ազգին եւ Եկեղեցոյն միասակար եւ անվաւեր է :

Ասոր ի հաստատութիւն թէեւ շատ օրինակներ կան . բայց ասոնցմէ մէկը միայն յիշեմ հասկցնելու համար թէ , այս բանն եղած է Եկեղեցոյ մէջ :

Գիտէք ասպքէն որ Գրիգոր Մուսարէկեանց կաթողիկոսի օրով ամենայն Հայոց Հայրապետութեան ինքնօրինութիւնը վասնուել եւ մաշել սպառնացող ժանիքներէն ազատելու համար երբ Ազգը Վաղարշապատի մէջ Եկեղեցական Ընդհանուր ժողով դուժարելով ուղեց Հայրապետական աթոռը Ս. Էջմիածին փոխադրել , եւ հրաւիրեց զԳրիգոր կաթողիկոսն Մուսարէկեանց որ գայ ի Ս. Էջմիածին եւ հոն վարէ իր պաշտօնը , Գրիգոր կաթողիկոս այս օրինակով ձայնիւ չսեց . այն ատեն Ազգը Վիրապեցի կիրակոս վարդապետը ընտրեց կաթողիկոս ամենայն Հայոց . չէ մի որ այս ընտրութիւնը Մուսարէկեանցի անկման վճիռն էր , զոր տուաւ Ազգը ամենայն իրաւամբ : Ասանկ ալ մէկ երկու տարիէն վերջը կիրակոս կաթողիկոսը ձգեցին եւ Գրիգոր անուն կաթողիկոս մը դրին . այս փոփոխութեանց մէջ թէեւ զեղծումներ ալ եղած կան , այլ սակայն օրինաւորապէս կատարուածներն ալ շատ են , ինչպէս է Մուսարէկեանցինը եւն :

Եկեղեցական Համագումար ժողովը 1866 ին առանց քննելու եւ վերահասու ըլլալու թէ Պետրոս կաթողիկոսի պաշտօնանկութիւնը Աղթամարայ միաբանութիւնն ու թեմականք որոշած են ըստ հին սովորութեան , եւ առանց տեղեկութիւն ունենալու թէ Պետրոս կաթողիկոսի պաշտօնանկութեան պիտի օգտէին նոյն վանքն եւ թեմականք , հապճեպով վճիռ մը տուեր է :

Համագումար ժողովոյ այս վճիռը Ազգային

ժողովոյս ատենը ելեր է ի գործադրութիւն . բայց թէ՛ նոյն ժողովին Նախագահ լուսահոգի Պօղոս Սրբազան Պատրիարքին յատենի Ազգ. ժողովոյ տրուած վճռոյն հապճեպով եղած ըլլալը յայտարարելովը եւ թէ՛ այն վճռագիրը ըստորագրող Եպիսկոպոսաց միւլնոյն յայտարարութիւնը աստ անդ ըրած ըլլալին լսուելովը՝ այն վճռոյն գործադրութիւնն առ կախ մնացեր է : Այս միջոցին Խաչատուր կաթողիկոս Պօլիս կը ժամանէ եւ եղած վճռոյն դէմ բողոքելով քննութիւն կը պահանջէ : Ուր ուրեմն Ազգային ժողովս իր 1870 Յունվար 25 ի նիստին մէջ նորէն նկատողութեան առնելով այս խնդիրը՝ որոշեր է յանձնել Սրբազան Պատրիարքին եւ Եկեղեցական Համագումար ժողովոյ անօրէնութեանը : Այս որոշումն ալ անգործադրելի մնալուն համար կրկին նկատողութեան առերեւոյն որոշումը վերստին հաստատուէ Ազգ. ժողովս . որուն վրայ գումարուած է վերջին Եկեղեցական Համագումար ժողովը եւ այս վճիռը տուած : Այս բացատրութեանցս վրայ կը խնդրեմ որ լուուշադրութիւն ընէք . քանզի պիտի հաստատեմ թէ հակասութեան մէջ ինկած չէ Համագումար ժողովն իր վերջին վճռովը :

Եկեղեցական Համագումար ժողովն Աղթամարայ կաթողիկոսական խնդիրն երկրորդ անգամ նկատողութեան առնելով Յանձնաժողովի մը կը յանձնէ որ խնդիրը քննելով տեղեկագիր մը բերէ , ամբաստանեալն ու ամբաստանողը խօսեցնելու պայմանաւ : Յանձնաժողովը իր պաշտօնը կատարելով խնդիրն իր ամէն պարագաներովը լուսաբանող տեղեկագիր մը կը ներկայացնէ Համագումար ժողովին , զոր Նախագահ Սրբազանն ալ տեսած եւ կարդացած է . Համագումար ժողովը այս տեղեկագրէն խնդրոյն ինչ եւ ինչպէս ըլլալը եւ անոր ամէն պարագաներուն վրայ լուսաբանուելով իր արդէն տուած վճռոյն թերի ըլլալը ընդունելու եւ հասուն կերպով իր վճիռը տուեր է թէ Խաչատուր Արքազանի ընտրութիւնը եւ կաթողիկոսական օծումն օրինաւոր է :

Արդ քանի որ Աղթամարայ խնդրոյն ամէն պարագաները այսպէս կատարեալ քննուելէ ետքը երբ Համագումար ժողովը իր առաջին վճիռը փոխելով նոր վճիռ մը կուտայ , երկու վճիռ տուած կըլլայ արդեօք , որ վերջինը առաջնոյն հակասական եղած ըլլայ . եւ ինչո՞ւ իրաւասութիւն չունենայ Համագումար

ժողովը՝ խնդրոյ մը վրայ իր տուած վճռոյն թերութեանց վերահասու եղած ատեն՝ արդարութեան համաձայն զայն փոխելու եւ նոր վճիռ մը տալու :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՏ . — Շա՛տ իրաւացի է Տ. Մատթէոս վարդապետին զիտողութիւնը , քանզի մեր ժողովներն անօխալ չեն :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ . (Շարձակ) — Այս խնդրոյն համար Արարատեան Մայր աթոռին զիմելու ալ հարկ չկար . վասն զի Համագումար ժողովն իր մէկ որոշումը փոխելը իր ձեռնհասութեան վեր չէր կրնար դատել . Ահա Սահմանադրութեան այն յօդուածն որ կ'օրինադրէ թէ Համագումար ժողովը ե՛րբ պէտք է զիմէ Արարատեան մայր աթոռին « եթէ Եկեղեցական Համագումար ժողովն ալ խնդիրը իր ձեռնհասութեան վեր դատէ , « այն ժամանակ Ընդհանրական կաթողիկոսին « կը զիմէ ստորագրեալ տեղեկագրով » :

Այս յօդուածին ուժով Եկեղեցական Համագումար ժողովն այս խնդիրը լուծած է վերջնապէս : Գիտնալ հարկ է թէ , դարձեալ այս յօդուածին ուժով , եթէ Վ.Ե.Ն. Հայրապետին զիմել հարկ ըլլար , ինքը Համագումար ժողովը պիտի զիմէր եւ ոչ այլ մարմին . զի մատուցանելի խնդիրը Համագումար ժողովոյ ստորագրեալ տեղեկագրովը պիտի երթայ առ Վ.Ե.Ն. Հայրապետն ամենայն Հայոց :

Բացատրութիւններս եղրակացնելով կ'ըսեմ թէ , Աղթամարայ խնդրոյն վրայ Եկեղեցական Համագումար ժողովոյ տուած վճիռներն երկուք չեն . թերութիւնը ձեւին մէջն է միայն . եւ թէ իւր իրաւասութեան համաձայն առաջին վճռոյն թերի ըլլալը հասկնալով հասուն տեղեկութեանց վրայ նոր վճիռ մը տուեր եւ իրեն համար վերջացուցեր է խնդիրը : Եթէ Ազգային ժողովը Համագումար ժողովոյ վրճոյն պատճառաբանութիւններն կ'ուղէ գիտնալ . կրնայ՝ բայց ոչ իբրեւ համարառու պահանջել , այլ իբրեւ տեղեկութիւն խնդրել Եկեղեցական Համագումար ժողովէն :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՅ . — Ապրի՛ Տէր Մատթէոս վարդապետ :

(Հաւանութեան ցոյցեր շատ երեսփոխաններէ) :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ . — Այն ծանր խնդիրն որոյ վերայ կը վիճարանինք , արդէն ժո-

զոլոյս շատ մը նիստերուն խորհրդածութեանց նիւթ եղած է, եւ զժրադարար ապարդիւն մնացած՝ չնորհիւ այն դեղեւուն քայլերուն որ այս խնդրոյս նկատմամբ առնուած են ՚ի սկզբանէ անտի, Նախաքննիչ գիւանաց տեղեկաբուն ու նոյն գիւանաց տեղեկաբերին տուած բացատրութիւններովը անսաք ըստ բաւականի սոյն խնդրոյն ինչ վիճակի մէջ գտնուիլն այժմ. եւ թէ ինչ կերպով լուծել զայն կառաջարկեն ձեզ միացեալ գիւանքս. առաջարկութիւն մը՝ որ ամենէն աւելի օրինաւոր եւ ամենէն աւելի գործնականն է ըստ մեզ. ուստի եւ կը փախաքիմ առ այն հրաւիրել ձեր ուշադրութիւնը, յոստով որ կարծաթա խօքով լուսաբանեմ ըստ կարելոյն Նախաքննիչ գիւանաց մտածութիւնը:

Ազխամարայ խնդիրն երկու գլխաւոր կէտեր կը պարունակէ, Տեսարք, կրօնական եւ քաղաքական. կէտեր՝ որ իրարմէ անբաժան են, որովհետեւ երկուսն եւս միեւնոյն անձին վրայ կը կեդրոնանան միեւնոյն խնդրոյն մէջ: Ազգային ժողովս ցարդ իւր ուշադրութիւնը դարձուցած էր միայն կրօնական կէտին վերայ. ուստի եւ երկուսն սոյն խնդիրը Համագումար ժողովոյն զրկած էր ՚ի լուծմանէ. բայց Համագումար ժողովն եթէ կրօնական մասին լուծում մ'ալ կարենար տալ, սակայն զիստ խնդիրն իր լուծմանէն շատ հեռի մնացած կըլլար, ըստ որում քաղաքական կէտն՝ որ խնդրոյն ոգին է, կը մնար անլուծանելի, որովհետեւ ձեռնհաս ատենի մը առջեւ ելած չէր այն կէտը: Արդէն զայդ քաջ զգալով Համագումար ժողովն իւր վերջին վճռովը թէեւ կրօնական մասը լուծել խորհած է, սակայն քաղաքական մասը ձգած է Սրբազան Պատրիարք Հօր, որպէս զի ո՛ր ժողովոյն որ անկ է առ այն յանձնէ: Եթէ Համագումար ժողովն խնդրոյն կրօնական կէտին վրայ տրուած վճիռը վիճաբանութեան կամ այլ եւայլ կարծեաց տեղի կրնայ տալ, միւս մասին՝ այն է քաղաքական կէտին վրայ բրած որոշումը շատ իմաստուն է. զի չէ ուղած ձեռնամուխ լինել այն մասին՝ զոր ինք չէր կարող դատել: Բայց ա՜ն բուն իսկ այս կէտն է որ խնդրոյն այսքան ատեն երկարաձգուելուն պատճառ եղած է. խնդրոյն քաղաքական մասը հիմն է այն բուն ամբաստանութեանց, որ կը ծանրանան Խաչատուր Սրբազանին վրայ. ամբաստանութիւնք՝ զորս

հերքելու կամ հաստատելու համար կարեւոր են քննութիւնք, վկայք, հարցախորձք եւ օրինաց տրամադրութեանցը ներհուն խորհրդածութիւնք, ապա թէ վճիռ: Այսքան ծանրք չէ կրօնական մասը. վասն զի եկեղեցին օրէնք ունի. եթէ ըստ այնմ օրինաց ընտրուած է Խաչատուր եպիսկոպոս՝ վաւերական է նորա օժութիւնն ՚ի կաթողիկոսութիւն. իսկ եթէ օրինաց հակառակ՝ անվաւեր է նորա ընտրութիւնն ալ օժութիւնն ալ: Արդարեւ մեր դէմ Համագումար ժողովոյ երկու իրարու հակառակ վճիռներ կան. բայց ասոնցմէ մըն ընդունելի ըլլալը վճռելը զժողովս չպիտի ըլլայ. որովհետեւ վճռատուն եկեղեցոյ օրէնքն է, եւ Համագումար ժողովն ոչինչ պակաս Ազգային ժողովոյս պարտաւոր է հնազանդիլ այնմ եւ անոր համեմատ տալ իւր վճիռն՝ եթէ կ'օղջէ որ ընդունելի լինի այն եւ ի գործ գրուի:

Բացատրեմ ձեզ թէ ինչն առաջ եկած էր սոյն ժողովոյ կրկին իրարընդդէմ վճիռները: Ասկէց ճիշտ տասը տարի առաջ 1864 ին Խաչատուր եպիսկոպոս ընտրուեալ եւ օժուեր է կաթողիկոս նոյն իսկ Ազխամարայ մէջ հրաժարեալ Պետրոս կաթողիկոսի կենդանութեան օրով: Երբ Համագումար ժողովոյ հարցում ուղղուեր է թէ ընդունելի է Խաչատուրի օժութիւնը, առաջին անգամ անվաւեր վճռեր է հիմնելով զայն՝ նախորդին կենդանութեան օժուելուն վրայ: Սակայն ինչպէս մօր տեղեկաբեր եղբայրն ըսաւ, ազգային պատմութեան մէջ շատ գէպքեր կան որք կը ցուցունեն թէ զանուած են կաթողիկոսներ, որոց անբաւականութիւնը կամ ինքնակամ տուած հրաժեշտը նկատողութեան առնուելով իրենց աթոռէն վար առնուած են եւ այլք փոխանակած իրենց աթոռը, եւ օրինաւոր ճանչցուած է նոցա ընտրութիւնը: Ես նոյն Համագումար ժողովին ներկայ չէի, ուստի եւ չգիտեմ թէ սոյն պատմական գէպքերուն վրայ իմաստասիրած է թէ ոչ Սակայն եւ այնպէս չեմ կարծեր թէ նոյն ժողովոյ մէջ գտնուող Հարք անհուտ ըլլային պատմութեան, եւ թէ երկարաւոր տուած ըլլան իրենց վճիռը, որով Խաչատուր Սրբազանի ընտրութիւնն անվաւեր կը համարին: Այդ վճիռը գիտադիր չէ ունեցած ոչ եկեղեցական եւ ոչ աշխարհական գապէն. եւ եթէ գտնուեր են ումանք ի Հարց ժողովոյն՝ որ այն վճիռը շարունակեալ խոստովաներ են, այն ժամանակ

եղած է այդ խոստովանութիւնն՝ երբ ամբաստանեալն օրինաւորապէս ձայն բարձեր է բողոքելով վճռոյն ապօրինաւորութեանը դէմ: Եւ յորում էր՝ դիտէ՛ք ապօրինաւորութիւնը, — ամբաստանելոյն բացակայ գտնուած ժամանակ ժողովն անոր դատը տեսած եւ զինքը դատապարտած ըլլալուն մէջ: Ծանօթ է ձեզ, Տեսարք, որ արդարութիւնը կը պահանջէ որ ամբաստանեալը ներկայ գտնուի դատող ժողովին առջեւ, եթէ կարելի է՝ ինքզինքն արդարացնելու համար: Այս են օրէնք եկեղեցոյ. այսպէս վարուած են ամեն եկեղեցական ժողովք նոյն իսկ ամենէն ժանտ հերետիկոսներն ու յանցաւորները դատած ժամանակին: Այս արդարութեամբ կը վարուին նաեւ ամեն քաղաքակիրթ աշխարհական ատեանք, մարդսպանն ու աւազակն անգամ կը վայելեն իրենց այս արդար իրաւունքը: Եթէ նախորդ Համագումար ժողովը մեծագոյն պակասութիւն մը ունի, այս կէտիս մէջն է այն, որոյ հետեւանք եղած է եւ իւր վճռոյն հետեւորդ ժողովէ մը նկատողութեան անգամ չառնուիլը:

Երկրորդ Համագումար ժողովն առջեւն ունենալով Յանձնաժողովոյ մը այս խնդրոյն վրայ յօրինած ընդարձակ մէկ տեղեկագիրը՝ միանգամայն եւ պատմական դէպքերու նմանօրինակ անցքերը, ուրիշ սեսակետիւ նկատուելի խնդիրը եւ ըստ այնմ վճռեր է թէ ընդունելի է Խաչատուր Սրբազանի օժումը, կատարեալ է եւ այս վճիռը. թէ եւ ամբաստանեալը ներկայ գտնուած ըլլայ յատենի ժողովոյն, թէ եւ պատմութիւնը նմանօրինակ դէպքեր յառաջ բերած այ: Արդեօք չկրնար ըլլալ որ այս վճռոյն համար ալ ժամանակաւ ըսուի թէ շտապատրուած ըլլայ, քանի որ Պետրոս կաթողիկոսի հրաժարականի օրինակ մը կայ, բայց բնագիրը մէջ տեղ չերեւիր, քանի որ Ազգ. Վարչութիւնը հրահանգ զրկած է որ կաթողիկոսական ընտրութիւն չըլլուի, քանի որ Վարչութիւնէն կարգեալ կաթողիկոսական Տեղապահը բողոքած է եւ արգիլել ուղած եղեալ ընտրութիւնը:

Ինչ որ ալ ըլլայ, Տեսարք, Համագումար ժողովոյն այս երկու հակասական երեւցած վրճիռներուն մէջ պէտք չէ որ ժողովը տատանի, քանի որ խնդրոյն քաղաքական մասն անլուծ կը կենայ, եւ այս մասն է ամենէն աւելի սրժգալին եւ ամենէն աւելի դարձուրելին: Եղա

են ընտրութիւններ, եղած են օժումներ՝ որ թէեւ ապօրինաւորութեանց արդիւնք, բայց ժամանակը, Ազգին կամքն օրինաւորութեան կերպարանք տուած են անոնց, եւ պատմութիւնը վաւերացուցած է իւր արձանագրութեանցը մէջ: Սակայն հոս ամբաստանութիւն մը կայ, ահաւոր ամբաստանութիւն մը՝ զոր ոչ Ազգին կամքը կարող է արդարացնել, ոչ ժամանակը կարող է զայն սրբել եւ ոչ պատմութիւնը կարող է զայն ի մոռացօնս արկանել, մինչեւ որ արդարութիւնը չքննէ զայն եւ իւր վճիռը չարձակէ: Արեւան մը բողոք կայ՝ որ այնչափ աւելի անեղ կերպով կը բարբառի՝ որչափ լուծ է այն բերանը, որ կարող էր իւր մարդախոշոշ սպանչին անունը մեղ ծանօթացնել: Գուցէ այն ատեն պիտի արդարանար, ինչպէս սիրելի է յուսուի, Խաչատուր եպիսկոպոս, եւ իւր ընտրութեան ու օժման ժամանակ եղած թերութիւնք՝ եթէ կան՝ ներողութեան արժանանային իւր տանամուտայ տուայտանօքն ու համբերատար ժուժկալութեամբը: Յիշեցէք որ եպիսկոպոս մըն է ամբաստանեալն, եկեղեցոյ բարձրագոյն պաշտօնեայն՝ որոյ վերայ արիւնարբու ոճրի մը մեղսակցութեան ամբաստանութիւն կը ծանրանայ. բայց եթէ եւ աշխարհական մ'ալ ըլլար, մինչեւ որ իւր վրայէն այդ սեւ գրոշմը չմաքրուի, ինչ օգուտ կ'ունենար ուրիշ կողմէ արդարանալը: Ուստի նախաքննիչ գիւանաց առաջարկութեան համեմատ այս պարագային մէջ ժողովոյդ պարտաւորութիւնն է իւր բոլոր ուշադրութիւնը խնդրոյն քաղաքական կէտին վրայ դարձնել: Այո՛, այս ամբաստանութիւնը քանի որ կայ խնդրոյն կրօնական մասն իւր կարեւորութիւնը կորուսած է, Տեսարք. բայց ձի եւ ուր պիտի ընէ այդ ամբաստանութեան քննութիւնը, կը խնդրեմ որ յիշեալ առաջարկութեան ոգին լաւ ըմբռնուի. վասն զի մինչեւ ցարդ խօսուածներէն ինձ այնպէս կ'երեւի որ տակաւին լաւ մը թափանցուած չէր մտքերուն մէջ: Միացեալ գիւանաց տեղեկագիրը կ'ըսէ թէ Ազխամարայ կաթողիկոսական խնդիրը տեղական կամ մասնաւոր խնդիր մ'է, ուստի սխալմամբ կամ գուցէ Սահմանադրութեան ոգոյն լաւ միտ չը գնելով բերուած էր Ազգ. ժողովոյն ատեանը: Այո՛ սխալմամբ մեր ատեանն եկած է այս խնդիրը, վասն զի մասնաւոր խնդիր մ'է այս, գաւառի մը վերաբերեալ խնդիր եւ ոչ ազգա-

յին ընդհանրութեան վերաբերեալ խնդիր մ'է՝ որ արժանի լինէր Ազգ. ժողովոյս վեհագոյն տա-
 եանը բարձրանալ : Պէտք էր այս դորձն ուղղակի
 Վարչութեան Խառն ժողովոյն մէջ ի նկատի առ-
 նուիլ եւ տնօրինուիլ : վասն զի Խառն ժողովն
 այն դատական եւ վարչական մարմինն է որ
 պատգամաւորութիւն ընդունած է Ազգա-
 յին ժողովէս այսօրինակ խնդիրները քննելու
 դատելու եւ տնօրինելու : Աւրեմն փութանք
 մինչեւ ցարդ եղած սխալներն ուղղել : մաս-
 նաւոր եւ տեղական խնդիրներն այս ատենանէն
 հեռացնել, եւ մեզի վերապահել ինչ որ ընդհա-
 նուր է, ինչ որ կենսական ազգային շահոց հա-
 մար . անոնց միայն զօնենք մեր թանկագին
 ժամերն, եթէ կ'ուզենք որ արդիւնաւոր ըլլան
 ժողովոյս ազգանուէր վայրկեանները :

Յանձնենք ուրեմն Ազգ. Վարչութեան որ
 արդարութեամբ քննէ այս կնճռալից խնդիրն,
 առաջի ունենալով ցարդ եղած քննութիւննե-
 ըն, ամբաստանեալն, օրէնքն ու իրաւուն-
 քը : Ձեր պարտքն է պատուէր դնել Վարչու-
 թեան որ փութացնէ այս դատաստանը, եւ
 այլ եւս չերկարաձգէ զայն դանդաղանօք : ինչ-
 պէս որ դժբաղդարար տեղի ունեցած է մին-
 չեւ ցարդ : Ամբաստանեալ մը կայ ըսի՝ որ ե-
 կեղեցւոյ բարձրագոյն մէկ պաշտօնակալն է,
 գուցէ եւ տարապարտ կը հեծէ ցարդ . պէտք
 է արդարութիւնն ի նկատի առնու նորա անձ-
 նաջատագովութեան փաստերը : Գաւառ մը կայ
 որ անտերունջ մնացած է գրեթէ տասը
 տարիներէ ՚ի վեր եւ կուսակցութեանց փո-
 թորիկներու մատնուած, պէտք է որ արդար
 եւ օրինաւոր քննութիւն մը վախճան տայ այս
 ամեն ցաւոց եւ տագնապանաց :

Եւ երբ Վարչութիւնն իւր քննութիւնքն
 աւարտէ եւ արդարութիւնը քաղաքական մա-
 սին իւր վճիռն արձակէ, պիտի տեսնէ ժողո-
 վը թէ խնդրոյն կրօնական մասն ո՞րչափ դիւ-
 րաւ պիտի իւր լուծումն ընդունի : Բայց եթէ
 այն ատեն հարկ տեսնէք եւ դարձեալ նախա-
 քննիչ դիւանացս յանձնէք՝ ձեր վստահութեա-
 նըն արժանի, յուսամ որ դորձնական առա-
 ջարկութիւն մը կարենանք ներկայացնել կըրօ-
 նական խնդրոյն լուծմանը մասին, որով ինք-
 նին անհետանան ամեն դժուարութիւնք՝ որ
 յայտնա ժամանակաց հետէ կը տաղնապին
 այնքան ժողովներ :

Կը վերջացնեմ, Տեա՛րք, յորդորելով որ

10 տարիէն ՚ի վեր զմեզ շփոթող, խառնու-
 թիւն եւ կուսակցութիւններ յարուցանող եւ
 ամբաստանեալ մը առանց դատաստանի՝ ցարդ
 գուցէ լոկ կասկածանաց տակ նուաստացնող
 խնդրոյ մը օրինաւոր վախճան տանք այսօր ըստ
 սկզբանց արդարութեան եւ Սահմանադրութեան .
 եւ Ազգամարայ թեմական եղբարց ալ տանք
 այն խնդութիւնն որոյ կ'ըստպանեն այսքան տա-
 րիներէ ՚ի վեր : Այս ընթացքով եւ եթ Ազգա-
 յին ժողովը իւր բարձր կոչմանն արժանի կը
 հանդիսանայ :

Այս միջոցին շատ մը ձայներ քուէարկու-
 թիւն խնդրեցին :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ.— Խօսք կ'ուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Ըստ կանոնադրութեան
 ամեն ատենաբան մի եւ նոյն խնդրոյ վրայ եր-
 կու անգամ խօսելու իրաւունք ունի, եւ այս
 իրաւունքը չեմ ուզեր ժխտել ԻՓԷԿՃԵԱՆ Հ.Յ. ին,
 որ երկրորդ անգամ խօսք ուզած է . սակայն
 որովհետեւ քուէի դրուելու ձայներ կը լսուին,
 ուստի Գիւանը ըստ կանոնադրութեան պարտք
 կը համարի կանխապէս ժողովոյն հարցնել թէ
 վիճաբանութեան շարունակութիւնը կ'ուզէ՞ թէ
 ո'չ :

Գարծեալ նոյն ձայները քուէի դնելու հա-
 մար կրկնուեցան :

Ատենապետ Պէյը քուէի դրաւ, եւ ժողովն
 Յ ի դէմ 26 ձայնով վիճաբանութիւնը դոցել օ-
 րոշեց :

Յետոյ Ատենապետ Պէյ պատրաստուեցաւ
 տեղեկագրին եղբակացութիւնը քուէի դնել, եւ
 կարդացուեցաւ այն, որ ահաւասիկ .

Միացեալ դիւանք կ'առաջարկեն

1. Խնդրոյն քուէիւն եւ քուէիւն մասը կեդ-
 րանիւն վարչութեան Խառն ժողովոյ յանձնել, որպէս
 զէ նորի եղած քննութիւնները կարելի չ'ըլլայ
 դարձնել քուէի :
2. Խնդրոյն վերջիւնիւն լուծումը երկարացնել
 լով, սպասել քուէիւն եւ քուէիւն քննութեանց օ-
 րոշումնը :

ԻՓԷԿՃԵԱՆ Կ. ԷՅ.— Կարծեմ երկու ա-
 ռաջարկութիւն կայ քուէի դրուելու . Խորէն
 Սրբազան ալ առաջարկութիւն մը ըրաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Վիճաբանութիւնը դոց-
 ուած է ժողովին որոշմամբը . հիմա այս տեղե-
 կագրին է որ քուէի պիտի դրուի . բայց ստի
 եղբակացութիւն ունի, որ պիտի ընդունուի կամ
 մերժուի . թէ որ մերժուի, այն ատեն ըրնա-
 կանաբար ուրիշ առաջարկութեան վրայ վիճա-
 բանութիւն կը բացուի :

Հետեւապէս տեղեկագրին եղբակացութիւ-
 նը քուէի դրուելով, առանց հակառակ ձայնի
 միակամ հաւանութեամբ ընդունուեցաւ ժողո-
 վէն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Ինձ այնպէս կը
 թուի թէ այս խնդիրն՝ որուն սկզբնաւորութե-
 նէն ՚ի վեր 10 տարի անցած է, այս ճամբով
 թէ որ 10 տարի ալ աշխատինք չլուծուիր . եւ
 կը մտածեմ թէ Խառն ժողովն ինչպէս պիտի
 կարենայ աւարտել անոր քաղաքական կէտին
 քննութիւնը : Տասը տարի առաջ սպանութիւն
 մը տեղի ունեցեր է Պետրոս կաթողիկոսի ան-
 ձին վրայ . այն ատեն Տէրութիւնը քննութիւն
 բացեր է, Ազգն ալ իր կողմէն երկու եպիս-
 կոպոս քննիչ կարգեր է . քննութիւնն եղբա-
 կացուցեր է թէ Խաչատուր Սրբազան կասկա-
 ձելի է, բայց երբէք մարդասպան չէ . եւ ին-

չու կասկածելի է, անոր համար որ սպանող-
 ներէն մէկն իւր ծառայութեանը մէջ է եղեր,
 եւ այս մարդն աներեւոյթ եղած է . մինչեւ որ
 երեւան չգայ՝ Խաչատուր Սրբազան կասկա-
 ծանքէ սրբուելիք չունի : Ահա ասոր համար
 կ'ըսեմ թէ 10 տարի ալ անցնի անհնարին է այս
 կէտը լուծել : Ես պարտքէ ազատելու համար
 կ'ըսեմ դայս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՊԷՅ.— Սրբազան Հայր, Ազ-
 գային ժողովը Վարչութեան յանձնեց այդ կէ-
 տին քննութիւնն ու տնօրէնութիւնն ընել .
 Խառն ժողովին կը մնայ պարագաները ժամ
 մ'առաջ քննել, ըստ բաղձանաց Ձեր Սրբազ-
 նութեան, եւ հարկ եղածը տնօրինել :

Յաջորդ նիստն 15 օրէն գումարել որոշ-
 ուեցաւ ըստ յետագայ Օրակարգի .

1. Տեղեկագիր Վ.Ե. Հայրապետի կոնդակի
 խնդրոյն :
2. Փոփոխեալ տրամադրութիւնք Ազգային
 Սահմանադրութեան :

Ատենը վերջաւ ժամ 10 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՑ ԵԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏՅՏԵԱՆ



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text at the bottom of the page.



85. Աւետիս	Քօլոլեան	Բ. 2	118.	Խարբերոյ	
86. Նազարէթ	Շահազ	Բ.	119. Յովհան	Եղեշեան	
87. Նշան	Ոսեան	Բ. 2		Պալըքիսի	
88. Յակոբ	Քաղաղեան	Բ.	120. Յովհաննէս	Յովակիմեան	
89. Եղիազար	Մելիքեան	Բ. 2		Մոռ	
90.					
91.					
92.			121. Սահաբ	Պ. Պ. Փափաղեանց	
93.				Չիյթոնն և Մարաշ	
94.			122.		
	Խաղաղիկ				
95. Առաքել	Ալթուն Տիւրքի			Տիվրիկ	
96. Խաչատուր	Պ. Միսաքեան		125. Պողոս	Մովսէսեան	Բ. 2
97. Սարգիս	Արաղեան	Բ.		Տրսոյիզոն	
98. Սիմոն	Մեքայէլեան	Բ.	124. Մկրտիչ	Կիւրճեան	
99. Ռէթէոս	Պէլլիկեան	Բ.		Պաղտատ	
100.			125.		
	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ				
	Կարին				
101.				Տիգրանակերտ	
	Քիօթաննա		126. Թագէոս	Թերթեան	
102. Մեսրոպ	Յ. Ա. Վառեան	Բ.		Վան	
	Աղրիանոսոյոյիս		127. Սիմոն	Մաքսուտեան	Բ.
105. Ռուբէն	Կիւմիւշկերտանեան			Աղթամար	
	Նիկոսիոյիս		128. Առաքել Սեապ	Տատեան	ՀԲ.
104. Տիգրան	Կիւմիւշկերտանեան			Հարկոյ և Այնթապ	
	Ակն		129.		
105. Պետրոս	Միսաքեան	Բ.		Մերասիս	
	Ղարահիսար		150.		
106.				Տրուսնոյ	
	Արարկիւր		151.		
107. Կարապետ	Խաչիկեան			Կարս	
	Բաղիշ		152. Աբրահամ	Յ. Ա. Վաղեան	Բ. Գ
108.				Չիչկանազ	
	Պրոնտս		155. Համբարձում	Սարըքէշիկեան	Բ.
109. Քրիստոստուր	Ղազարոսեան			Գաղատիս	
	Եղրիկիս		154.		
110.				Ատանա	
	Ամասիս		155. Սիմոն	Պ. Նորատուկեան	Բ.
111. Համբարձում	Ալաճաճեան			Մըղերոյ	
	Բարոս		156. Մատթէոս	Ալիքսանեան	
112. Յովհաննէս	Ալմաուրեան				
	Եղևսիս				
115.					
	Մաննըլլի				
114.					
	Հանն				
115.					
	Երզնիս և Բարերոյ				
116.					
	Թերիքտապ				
117. Տիգրան	Գ. Սինեան				

(Վիճակք տակաւին չեն ընտրած)

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՆԵՓՈՒՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՆԱԿԱՆ ՍԵՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅՍՏԿԱՏԵՍԱԼ

**Կը ճախուշի ի Գիշանուտան Պատրիարքարանի, և կը գտնուշի
Ֆիզիկական քանկաչևերը:**